

1 (14), 2007

ՀՏԴ 330.1

Տնտեսագիտություն

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱՌԱՄԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Ա.Ա.Գաուպարյան, Կ.Վ.Միրզոյան, Ա.Վ.Միրզոյան

Պետությունը կատարելով ծախսեր ապահովում է իր գործառնությունների իրականացումը և ուղղակի ազդեցություն է թողնում տնտեսության վրա:

Պետությունը տնտեսության վրա ազդում է յուրաքանչյուր անգամ, երբ իրականացվում է ֆինանսական գործառնությունները մասնավոր հատվածի ուժերից վեր ծառայությունների մատուցմամբ: Սակայն ոչ մի պարագայում չպետք է անտեսել այն հանգամանքը, որ բյուջե միջոցները անհրաժեշտ է օգտագործել շաղիռնալ: Բյուջեի միջոցների շաղիռնալ օգտագործման հիմնահարցը հատկապես կարևորվում է ֆինանսական ճգնաժամի, բյուջեի դեֆիցիտի աճը և պետական պարտքի մարման սպասարկման խոշոր ծախսերի պայմաններում: Բյուջեի ծախսերի կրճատման ուղղություններն են.

1) պաշտպանության ծախսերի կրճատումը

2) պետական կառավարման ապարատի պահպանության ծախսերի կրճատումը

3) բյուջեի միջոցների ծախսման արդյունավետության և առաջնահերթ ուղղությունների որոշումը

4) առանձին ճյուղերին հատկացվող դոտացիաների ոչ արտադրական ծախսերի փոքրացումը

5) պետական ծրագրերի քանակի կրճատումը

6) պետական պարտքի սպասարկման ծախսերի նվազեցումը

7) բյուջեի միջոցների օգտագործման հսկողության սահմանումը:

Ծախսերի կրճատման որոշումներն ընդունվում են առանձին ծախսերի կարևորությունից և չափերից ելնելով՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման առաջնահերթությունը: Երկրի պաշտպանության ծախսերը պետք է իրականացվեն առանց երկրի անվտանգության ապահովման խնդրի վտանգման:

Պետական կառավարման ապարատի պահպանության ծախսերի կրճատումը ենթադրում է որպես ուղղություն ընտրել կառավարման ապարատի թվաքանակի կրճատումը և որակավորման բարձրացումը:

Բյուջեի միջոցների ծախսման նկատմամբ հսկողությունը պետք է ապահովի դրանց օգտագործումը գործող օրենքներին և նորմատիվ ակտերին համապատասխան:

Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ոչ նպատակային օգտագործումը բացառելու համար, մասնավորապես ներդնել բյուջետային հաշիվների համակարգ, լուծել պետական վարկերի վերադարձը խոչընդոտող խնդիրները, մշակել ապրանքային վարկերի օգտագործման ուղղությունները: Պահանջվում է կարգավորել առևտրային վարկերի գծով պետական երաշխիքների տրամադրումը, սահմանափակել հանձնարարականների մատչելիությունը, դրանք տրամադրել միայն հուսալի և բավարար լուծարային ապահովությամբ:

ԼՂՀ համայնքների բյուջետային ծախսերի կառուցվածքի ուսումնասիրությունը լատ տնտեսագիտական դասակարգման փաստում է, որ այստեղ կատարված ծախսերը, որոշ առումով անադրյունավետ են: Ամենամեծ մտահոգությունը դա ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերությունն է, ավելի ճիշտ անբավարար կապիտալ ծախսերի մակարդակը: ԼՂՀ քաղաքային և գյուղական համայնքներում մեծ մտահոգության առարկա են, հատկապես, ենթակառուցվածքները, որոնք վերանորոգման կարիք ունեն: Խնդրի լուծման ուղղությամբ կարևոր քայլ կարելի է համարել համայնքների խոշորացումը և այս ճանապարհով բյուջետային միջոցների փոշիացման կանխումը: Արդյունավետ գործառնական ծախսումներից խուսափելու, միջհամայնքային կապերը սերտացնելու, բյուջետային միջոցները կենտրոնացնելու և այս ճանապարհով համայնքների զարգացումը խթանելու համար ԼՂՀ առանձին տարածաշրջաններում փորձարարական կարգով կարելի է աշխատանքներ տանել տեղական կազմավորումների ձևավորման ուղղությամբ: Կազմավորումներ, որոնց մեջ կարող են մտնել մի

թանկացի մինչև տասնյակ գյուղեր: Անշուշտ, հետագայում այս ուղղությամբ հարկ կլինի լայնածավալվել օրենսդրարարական ապահովման, ինչպես նաև կազմակերպական աջակցություններ, հաշվի առնել տեղական առանձնահատկությունները, մշակել կազմավորումների մակարդման չափանիշները:

Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը յուրաքանչյուր պետության տնտեսական քաղաքականության առանցքային խնդիրներից, որի լուծմամբ են մեծապես առաջնությունը տնտեսական համակարգի բնականոն գործունեությունը և զարգացման տնտեսը:

Շուկայական հարաբերությունների պայմաններում բյուջետային ծախսերը պետք է ունենան այնպիսի ուղղվածություն, որը կնպաստի առավել կարևոր և խոշոր պետական խնդիրների լուծմանը. տնտեսության առանցքային ճյուղերի զարգացմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորմանը, արտադրության և սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի կառուցմանը գործման համար ֆինանսական հնարավորությունների ստեղծմանը: Բյուջետային միջոցների պատշաճ օգտագործման դեպքում կատարված ծախսերը կարող են ապահովել նվազագույնի նոր արդյունքներ՝ նպաստելով արտադրության աճին, գիտության զարգացմանը, կադրային ներուժի համալրմանը:

Ծախսերի ավելացումը պետք է կատարվի միայն այն հոգվածների գծով, որոնք առաջնություն կարող են ապահովել դրանց ռեալ վերադարձը ավելի մեծ չափերով: Բյուջեի ծախսերը պետք է ենթարկվեն մանրակրկիտ վերաքննության, վերլուծության և առավելագույնս լինեն հիմնավորված: Բյուջետային հիմնարկների ֆինանսավորումը պետք է թևի դրանց գործունեության վերջնական արդյունքների օգտակարությունից: Վերջինս հիմք կծառայի ֆինանսավորման կրճատման կամ հնարավոր ավելացման համար: Բյուջեից ֆինանսավորվող պետական պատվերներն ու պետական օժանդակության այլ ձևերը պետք է ուղղված լինեն տնտեսության ծախսավարական ճյուղերի բնականոն կենսագործունեության ապահովմանը և մրցակցության անհրաժեշտ մակարդակի վերականգնմանը:

Ըստ 2006-2008թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ԼՂՀ կառավարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է պետական բյուջեի հիմնական ծախսային ինտեյնսիվ գերակայությունները:

սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում դրանց գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսումն են ապահովում:

տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես արդյունաբերություն, գյուղատնտեսություն, ջրային (այդ թվում ռոտզման համակարգ) տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում, հիպոթեկային վարկավորման համակարգի ներդրում, փոքր և միջին ձեռնարկության զարգացման պետական աջակցության (ֆինանսական և ներդրումային) ապահովում, ձեռնարկատիրական գործունեության ընդլայնացում ԼՂՀ շրջաններում:

ԼՂՀ-ում 2007-2009թթ. կառահաշման սոցիալական ոլորտի, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության միջնաժամկետ ծախսային գերակա վիճակը:

Կշարունակվեն պետական ներդրումները արդյունաբերության, քաղաքաշինության, ջրային (այդ թվում ռոտզման համակարգ) տնտեսության, գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտներում:

Համապատասխան քայլեր կձեռնարկվեն տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ապահովության բարելավման ուղղությամբ:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի նպատակների իրագործումն ապահովելու համար ԼՂՀ կառավարությունը իրականացնում է բարեփոխումներ հանրապետությունում ծրագրային բյուջետավորում ներմուծելու ուղղությամբ:

Ծրագրային բյուջետավորումը դա մի ստեղծում կամ գործընթաց է, որը փորձում է փոխկապակցել օգտագործված ռեսուրսները ստացված արդյունքների հետ: Այն ստվ միայն մեկ

¹ Հաստատված է, Հանրապետության քաղաքականության կատարելագործման հիմնահանգները ՀՀ-ում:

² ԼՂՀ 2006-2008 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր:

³ ԼՂՀ 2007-2009թթ. ռազմավարական ծախսային գերակայությունները. [նախագիծ](#)

ուղի է ակնհայտ դարձնելու բյուջեի ծախսերի նպատակները և արդյունքները: Դրապես բյուջետավորման համակարգը կիրառում է որոշակի հասկացություններ և կառուցվածքներ, որոնք նպատակն է բազմապատկել բյուջեի ծախսերի փաստացի և առաջարկվող արդյունքները: Դրագրային բյուջետավորումը բաղկացած է ծրագրերից և գործողություններից:

Ծրագրային բյուջետավորումը հնարավորություն է տալիս քաղաքականության մշակողներին քանակապես գնահատել ծախսերի շուրջ ընդունված որոշումների հետևանքները: Մինչև ժամանակ ծրագրային բյուջետավորումը պահանջում է կառավարչական և մասնագիտական ունակություններ, որպեսզի հստակ մշակվեն յուրաքանչյուր ծրագրի նպատակները, խնդիրները և ծրագրի կատարողական չափորոշիչները:

Ծրագրային բյուջետավորումը կենտրոնացնում է ամեն մի ծրագրի արդյունքների վրա: Այն պահանջում է հաշվետու լինել բյուջետային ռեսուրսների օգտագործման համար ստացված արդյունքների տեսանկյունից, որը կարող է ստուգվել քանակապես գնահատվող ծրագրային չափորոշիչների միջոցով:

2003 թվականին ՀՀ կառավարությունը մշակել է ծրագրային բյուջետավորման բարեփոխման գործողությունների ծրագիր: Այս գործողությունների ծրագիրը հաշվի է առնում այն փաստը, որ ծախսային ծրագրի արդյունավետ կառուցվածքը հիմք է հանդիսանում հաշվող ծրագրային բյուջետավորման և քաղաքականության և բյուջեների կապի համար: Այս մոտեցումը 2003-2004թթ. փորձնականորեն կիրառվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ըստ գործողությունների ծրագրի պահանջների, իսկ սկսած 2004-ից այն կիրառվում է նաև ներք ալ նախարարություններում: ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության և ՀՀ մշակույթի և ներստարադրության հարցերի նախարարություններում:

Հիշյալծախային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը նշանակում է, որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ պետք է նշել նախատեսված արդյունքի բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից և միջանձնական ծախսերի ծրագրի նպատակների իրագործումը ապահովելու համար 1,7 ՀՀ 2006-2010թթ.: Կառավարության գործունեության ծրագրով նախատեսվում է բյուջետավորման համակարգում իրականացնել բարեփոխումներ հանրապետությունում ծրագրային բյուջետավորումը ներմուծելու ուղղությամբ, որի միջոցով հնարավոր կլինի փոխկապակցել օգտագործված բյուջետային ռեսուրսները ստացված արդյունքների հետ: Բյուջեն կդառնա դինամիկ, քան նախկինում, այն հնարավորություն կտա ստեղծել հիմնավորման մեխանիզմ բյուջեի հնարավոր կրճատման դեպքում, պետական ծախսերը համահունչ կլինեն պետական քաղաքականության գերակայություններին, և համակարգը հնարավորություն կընձեռի միջոցների միջոցառումային և ներդրողության վերաբաշխում իրականացնել նվազ գերակայություններից դեպի ավելի կարևորները և ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերից դեպի բարձր արդյունավետություն ունեցողները:

Նոր բյուջետային համակարգը պահանջելու է հաշվետու և պատասխանատու լինել բյուջետային ռեսուրսների օգտագործման համար ստացված արդյունքների տեսանկյունից, որը կարող է ստուգվել քանակապես գնահատվող ծրագրային չափորոշիչների միջոցով, այն հստակ բազմապատկելու է որոշում կայացնողների և հանրության համար, թե տվյալ բյուջետային միավորը հանրային ծառայությունների մատուցման տեսանկյունից ինչ է արել, ինչ է պլանավորում անել, և վերջապես քանակապես ինչպիսի արդյունավետություն է առաջադրված խնդիրները լուծելու: Ծրագրային բյուջետավորման բարեփոխման գերակա նպատակը պետական ծախսերի տեսանկյունից և ֆինանսական արդյունավետության բարձրացումն է, ռեսուրսներն առաջնահերթ ծախսային ուղղություններին հատկացնելու միջոցով:

Ծրագրային բյուջետավորումը, որպես նոր մոտեցում, նպատակահարմար է ներդնել ըստ փուլերի՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից մշակվելիք ծրագրային բյուջետավորման բարեփոխման գործողությունների ծրագրի, որովհետև կարող է անցումային շրջանը խառնաշփոթության պատճառ լինել, ու համակարգի ներդրման օգուտները անմիջապես ակնհայտ չեն լինի: Այս մոտեցումը 2006-2007թթ. փորձնականորեն կիրառվի 1,7 ՀՀ սոցիալական ապահովության և սոցիալական անապահովության նախարարությունում ըստ 1,7 ՀՀ կառավարության կողմից 2006 թվականին մշակվելիք ծրագրային բյուջետավորման բարեփոխման գործողությունների ծրագրի պահանջների, իսկ սկսած 2008 թվականից այն կիրառվելու է նաև ներք ալ նախարարություններում: ՀՀ առողջապահության և 1,7 ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարություններում: Նշված աշխատանքների առավել արդյունավետ կատարումը կազմակերպելու նպատակով համապատասխան մասնագետների

համաձայն ՀՀ-ում կիրականացվի դասընթացներ, որի միջոցով հնարավոր կլինի պետական

2003 թվականին ՀՀ-ի պետական բյուջեի ծախսերը կազմել են 12296,4 մլն դրամ: Ծախսերի
ծախսերը բաժին են ընկել «Կրթության և գիտության», «Սոցիալական ապահովագրություն» և
համապատասխանաբար 15,2%, 30,1%, 27,8%:

2004 թվականին պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա համապատասխան
մակարդակի համեմատ աճել է 18%-ով: Նախորդ տարվա համեմատ նվազել է
անհատական ծախսերի մեջ առողջապահության, սոցիալական անապահովագրության և
հիմնական ծախսերի չափերը: Սոցիալական անապահովագրության կշիռները: Ամենամեծ
բաժին են ընկել նույն հոգվածներին՝ համապատասխանաբար 15,7%, 27,4% և 27,4%:

2005 թվականին ՀՀ-ի պետական բյուջեի ծախսերը կազմել են 20246,0 մլն դրամ (ներառյալ
բյուջեի և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին
դրամագումարները)՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի մակարդակի համեմատ
39,6 %-ով, իսկ 2003 թվականի համապատասխան ցուցանիշի մակարդակի համեմատ՝
44,4%-ով:

Ըստ գործառնական դասակարգման խմբերի պետական բյուջեի ծախսերի
առանձնահատկությունը ցույց է տալիս, որ ընդհանուր ծախսերի 32,3%-ը կազմել են հիմնական
ծախսերը: Սոցիալական ոլորտի ճյուղերին (կրթություն և գիտություն, առողջապահություն,
սոցիալական ապահովագրություն և ապահովություն, մշակույթ,
տնտեսական ակտիվություն, սպորտ և կրոն) բաժին է ընկել բյուջեի ընդհանուր ծախսերի 46,6 %:

2006 թվականի հաստատված պետական բյուջեի ծախսերը կազմում են 27304,3 մլն դրամ:
Ծախսերի գերակշիռ մասը բաժին են հասել կրթություն և գիտություն, սոցիալական
ապահովագրություն և ապահովություն և հիմնական խմբին չափերը ծախսերին
համապատասխանաբար՝ 15,3%, 20,1%, 30,7%:

Ամփոփում

ՀՀ իրականացվող տնտեսական քարտեզագծման համատեքստում իր կարևորությամբ
առանձնանում է բյուջետային գործընթացի կատարելագործումը, հատկապես բյուջետային
ծախսերի պլանավորման, իրականացման ու վերահսկողության արդյունավետ մեխանիզմների
ստեղծման հիմնախնդիրները: Հողվածում վեր է լուծվում ոլորտում տիրող իրավիճակը վերջին
տարիներին, նշվում են բյուջետային ծախսերի գերակա ուղղությունները, տրվում են
առաջարկություններ ծրագրային բյուջետավորման ներդրման, ՀՀ համայնքների թվաքանակի
ստատիստիկական, բյուջետային հաշիվների համակարգի ներդրման, վարկերի գծով պետական
օրաշխիքների տրամադրման պրակտիկայի կիրառման վերաբերյալ:

Резюме

В контексте проведенных в НКР экономических преобразований по важности выделяется совершенствование бюджетного процесса, в особенности проблемы внедрения эффективных механизмов планирования, осуществления и контроля бюджетных расходов.

В статье анализируются состояние указанных процессов в этой сфере за последние годы, отмечаются приоритетные направления бюджетных расходов, делаются предложения по внедрению программного бюджетирования, оптимизации количества общин в НКР, внедрения порных счетов и введение практики бюджетных гарантий государственных кредитов.

Դրականություն

1. Բոստանջյան Վ., Կիրակոսյան Գ., Սաֆարյան Ա. Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցեր ՀՀ-ում, Երևան, 2004:
2. ՀՀ Կառավարության հուլիսի 25-ի թիվ 157 որոշում, 1995:
3. ՀՀ Կառավարության դեկտեմբերի 5-ի թիվ 287 որոշում 1995:

ԱրմԳ, տնտեսագիտության ամբիոն